8167

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 147 - 24

Նախաձեռնող՝ ***«Արմստրոյ» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, ք. Սիսիան Ա.Մանուկյան 15

Գործունեությունը՝ ***Ջերմուկ քաղաքի փարածքում ըմպելասրահի հուշարձան շենքի վերակառուցման աշխատանքներ***
Վայոց ձորի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 147 - 24

«05» օգոստոսի 2024թ.

Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ըմպելասրահի հուշարձան շենքի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Արմստրոյ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Վայոց Ձորի մարզ

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ հաշվետվություն/ համաձայն՝ նախատեսվում է իրականացնել ըմպելասրահի հուշարձան շենքի /այսուհետ՝ ըմպելասրահ/ վերականգնման, ինչպես նաև ըմպելասրահին կից ճեմուղու վերակառուցման աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Ջերմուկ համայնքի կողմից տրամադրված 2023թ. հոկտեմբերի 31-ի N 9 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված նախագծային առաջադրանքը: Հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական գործառնական նշանակության գոտիներում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 395.2 մ²:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ վերակառուցել Գ. Թամանյանի նախագծով 1956թ. կառուցված ըմպելասրահը: Ծրագրի իրականացնող է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ):

ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 17-ի թիվ 754-Ն որոշմամբ ըմպելասրահը ընդգրկվել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Ըմպելասրահի գործող 5 աղբյուրներից հոսող հանքային ջրերն ունեն բուժիչ հատկություն և այդ իսկ նպատակով ըմպելասրահը գրեթե միշտ լեցուն է:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունը գտնվում է Ջերմուկ առողջարանային քաղաքում, Եղեգնաձոր մարզկենտրոնից 50 կմ հյուսիս-արևելք՝ Արփա գետի ակունքի շրջանում, Երևանից 173 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է ծովի մակարդակից 2080մ բարձրության վրա՝ ոչ մեծ սարահարթում: Ռելիեֆը լեռնային է, խիստ կտրտված՝ անհամաչափ լանջերով:

Նախատեսվող գործունեության տարածքը ասֆալտբետոնյա ծածկով է, հողի բերրի շերտը բացակայում է:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը տարածաշրջանին բնորոշ լեռնային է, սառցադաշտային (3000 մետրից բարձր) ձևերի, գոգահովիտների զառիթափ անհամաչափ լանջերով լեռնաճյուղերի, քարափների, նեղ ու երկար սարավանդների բարդ համակցությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքից 4–9 կմ հեռավորության վրա գտնվում են «Ջերմուկի ջրաբանական», «Հերհերի նոսրանտառային» և «Ջերմուկի անտառային» պետական արգելավայրերը:

Ջերմուկ քաղաքին բնորոշ է տիպիկ լեռնային կլիման՝ զով ամառով և ցուրտ ձմեռով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 33°C, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -30°C, օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 60%, տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 800մ մ, ձյունածածկ օրերի թիվը կազմում է 40-150 օր:

Ըմպելասրահի շենքն իրենից ներկայացնում է բաց սյունազարդ սրահ՝ 395.2 քմ մակերեսով: Նախատեսվում է իրականացնել ըմպելասրահի շենքի վերակառուցում՝ ուժեղացումով և բարեկարգումով, ըմպելասրահի հարթակի վերականգնում, տանիքի փոխարիում՝ նոր ցինկապատ թիթեղյա տանիքով, սյուների և պատերի զարդաքանդակների մաքրում և վերանորոգում, ջրամատակարարման, ջրահեռացման և կոյուղու համակարգերի վերականգնում, սանիտարական հանգույցի վերակառուցում, արտաքին լուսավորության համակարգի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց համար վերելակի տեղադրում մինչև ըմպելասրահի հարթակ, այնուհետև թեքհարթակի կառուցում՝ մինչև հանքային ջրերի սրահ: Ըմպելասրահի ետնամասում նախատեսվում է կառուցել հենապատ և ջրահեռացման ուղիներ՝ ըմպելասրահը մեկուսացնելով ետևի թեք լանջից թափվող ջրային հոսքերից: Հենապատի կառուցման համար նախատեսվում է մոտ 2,0մ լայնությամբ և 50մ երկարությամբ տարածքը մաքրել թփուտներից և հատել փոքր տրամաչափի 3 ծառ (ուռենի): ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N1045-Ն որոշման 8-րդ և 8.1-րդ կետի համաձայն, նախաձեռնողը լիազորված պետական մարմնի համաձայնեցմանը կներկայացնի անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր, որը կներառի օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը: Հենապատի կառուցման համար անհրաժեշտ խրամուղիների փորման աշխատանքները իրականացվելու են ձեռքով:

Նախատեսվում է վերանորոգել և բազալտե քարով երեսապատել 35 մ և 265 մ երկարությամբ 2 ճեմուղի՝ առանց շարվածքի լայնության և երկարության փոփոխության, որոնք սկիզբ են առնում ըմպելասրահի ձախակողմյան մասից, անտառի միջով բարձրանում մինչև քարայծի արձանը: Անվտանգության ապահովման նպատակով՝ որոշ հատվածներում նախատեսվում է մետաղական բազրիքի տեղադրում՝ համապատասխան բետոնե հիմքով: Ճեմուղու երկայնքով նախատեսվում է նստարանների և աղբամանների տեղադրում, արտաքին լուսավորության իրականացում՝ 21 հենասյուների տեղադրմամբ:

Հնասյուների տեղադրման և հենապատի կառուցման համար կհեռացվի 27մ բուսահող: Բուսահողի պահպանման և հետագա օգտագործման համար անհրաժեշտ միջոցառումները իրականացվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404-ն որոշման, իսկ հանված հողային զանգվածը կօգտագործվի հետլիցի համար:

Վերակառուցման աշխատանքները սկսելուց առաջ, ըմպելասրահ մտնող հանքային տաք ջուրը խողովակով կտեղափոխվի Ջերմուկի համայնքապետարանի կողմից հատացված վայր՝ ըմպելասրահի այցելուներին և բուժառուներին հնարավորություն ընձեռնելով անարգել օգտվելու հանքային ջրից: Տեղափոխումը կիրականացվի այնպիսի հեռավորության վրա և այնպիսի պայմաններով, որ հնարավորինս չխախտվի հանքային ջրի ջերմային և որակական հատկանիշները

Համաձայն հաշվետվության՝ վերակառուցման և շինարարական աշխատանքները տևելու են 12 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են՝ 1 ավտոկռունկ և 2 ավտոբեռնատար: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու:

Աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես՝ բազալտ, ցեմենտ, ավազ, խիճ, ամրան, մետաղական կոնստրուկցիաներ և այլն: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Խմելու ջրի մատակարարումն իրականացվելու է քաղաքային ցանցի միջոցով, իսկ ջրցանի համար ջուրը շինհարապարակ կբերվի ջրցան մեքենայով: Ջրամատակարարումը կիրականացվի պայմանագրային հիմունքերով:

Ջրցանի համար օգտագործվող ջրի քանակը կկազմի՝ 198 մ^3 , ամբողջ ընթացքի համար, իսկ անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար՝ 164մ^3/ շին ժամ: Ըմպելասրահի վերակառուցման համար ներգրավվելու են 21 մարդ՝ 18 բանվոր, 3 տեխնիկական անձնակազմ:

Ըմպելասրահի էլեկտրամատակարարումը իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ջերմուկ» մասնաճյուղի կողմից՝ պայմնանագրային հրմունքներով:

Նախատեսվող գործունեության շխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են լինելու՝ կենցաղային աղբ (ծածկագիրը՝ 912004000100 4) 6.3 մ^3, շինարարական աղբ (ծածկագիրը՝ 912006010100 4)՝ մոտ 20 մ^3: Թափոններն ամբողջությամբ տեղափոխվելու են Ջերմուկի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 21-ի թիվ 91-Ն որոշման՝ մթնոլորտային օդի վրա գործունեության հետևանքով առաջացած տնտեսական վնասը գնահատվում է ընդհանուր 89328 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման նպատակով նախատեսվում է հետևյալ միջոցառումները.

- շինհրապարակի պատրաստում և շինանյութերի ընդունման հրապարակների նախատեսում,

- օդի աղտոտման և փոշու ստուգման կառավարում՝ պարբերական ջրցանում, օդի որակի չափագրումներ՝ բողոքների դեպքում,
- թափոնների պատշաճ հավաքում և հեռացում արտոնագիր ունեցող աղբահավաք կազմակերպությունների կողմից,
- աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակի չափագրումներ՝ բողոքների դեպքում,
- աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, բոլոր մեքենաներն ապահովել համապատասխան խլացուցիչներով,
- բետոնի բեռնաթափումից հետո, բետոնախառնիչի բունկերի լվացումն իրականացնել շինարարական հրապարակից դուրս՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունում,
- շինարարական տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ, վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- գործունեության տարածքի, ինչպես նաև հարակից տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկում,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
- շինարարական հրապարակում շրջակա միջավայրի և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում,

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են ծրագրի արժեքի 1 - 2% :

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ջերմուկ քաղաքի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Ջերմուկի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները, ինչպես նաև «Հայաստանի անտառներ» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացուցիչը: Հանրային քննարկման ընթացքում վերջինիս և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները դիտարկվել են փորձաքննական գործընթացում, որի արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Հաշվետվությամբ ներկայացված աշխատանքները սկսել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:

- Խստորեն հետևել գործունեությանն առնչվող՝ շրջկա միջավայրի պահպանության, քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների, աշխատանքի անվտանգության և այլ իրավական ակտերի պահանջներին:

- Հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ըմպելասրահի հուշարձան շենքի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան